## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**«ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-22/06» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան — **« 10 » « հունվարի » 2022թ.**

**ժամը 09:30**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ — Մ.Մարգարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Լ.Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ — Ջ.Պապյան

Բացակայում է

Հանձնաժողովի անդամ՝ — Ա.Ավետիսյան

### 1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-22/06» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ տեղեկություններ

1.1. «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացրել է Հավելված N 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

### 2. Հանձնաժողովը որոշեց՝

-------------------------------------------------------------------------------

(Մ.Մարգարյան)

2.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-22/06» ծածկագրով մրցույթի՝ չափաբաժին 1-ով հաղթող ճանաչել «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին:

2.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-22/06» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ և որակավորման ապահովման տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 15 տոկոսի չափով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուից կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

### 3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝

____________________ Մ.Մարգարյան

____________________ Լ.Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

____________________ Ջ.Պապյան